

Հ.Հ Արմավիրի մարզի Հայկական գյուղական համայնքի  
ղեկավար՝ Ս. Գևորգյանի 2013թվականի տարեկան կատարած աշխատանքների  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ Հ.Հ Արմավիրի մարզպետի տեղակալ պարոն՝ Ս. Քարտաշյանի, համայնքի  
ավագանու անդամների և 53 համայնքի բնակիչների.

23.01.2014թ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկական գյուղական համայնքի  
ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից  
բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական Ինքնակառավարման  
մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով,  
համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ  
գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված  
իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2013թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի  
սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը համայնքի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացումն է,  
որին հասնելու համար սահմանվել են կարևորագույն խնդիրներ, որոնք էլ անհրաժեշտություն  
է եղել լուծելու 2013թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն  
պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և  
համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը, որի արդյունքում արձանագրվել է  
որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱԴՊԱՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական  
աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվել ոռոգման ջրի մատակարարման համար: Չմայած այն  
հանգամանքին, որ մայիսի 12-ին տեղացած կարկուտի հետևանքով վնասվել էր նաև  
աշնանացան հացահատիկը, սակայն առանց կորուսների կազմակերպվել է աշնանացան  
հացահատիկի բերքահավաքը:

2013թվականի ընթացքում մի քանի դաշտամիջյան ճանապարհներ և կամուրջներ  
վերանորոգվել են:

Համայնքն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Համայնքում առկա են նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են.

1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից
2. Գյուղտեխնիկայի ոչ բավարար լինելը

3. Թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությունը:

Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է մատչելի գներով պարարտանյութ և դիզ-վարելանյութ:

Համայնքի ղեկավարի կողմից անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ պատշաճ կերպով կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, որի շնորհիվ չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

2013 թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտի հետևանքով 100% կարկտահարվեց ողջ համայնքի տարածքը, որը դժվարացրեց համայնքի ղեկավարի ծրագրերի իրականացումը անմիջապես կազմվեցին հանձնաժողովներ վնասված տարածքների չափը ճշտագրտելու համար:

Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը Կառավարությանը ներկայացրեց կարկտահարությունից տուժած համայնքների կրած վնասների չափը, այդ թվում նաև Հայկական համայնքի:

Կառավարությունը փողհատուցեց կարկտահարությունից տուժված համայնքների հողի հարկը, հողի վարձաակության վճարները և ջրի վարձավճարները:

Կառավարությունը 2,5 միլիոն դրամ հատկացրեց խորքային հորերի էլ. էներգիայի ծախսերը փոխհատուցելու համար:

Այդ դժվարին պահին համայնքներ այցելեցին Վարչապետ՝ Տիգրան Սարգսյանը, Գյուղ նախարար՝ Սերգո Կարապետյանը և Կառավարական այլ բարձրաստիճան այրեր Մարզպետ՝ Աշոտ Ղահրամանյանի ուղեկցությամբ: Նեցուկ կանգնելով գյուղացուն:

Արմավիրի Գ.Ա.Մ.Կ-ը հատկացրեց մի շարք խորհրդատվական թերթիկներ և “ԷԿՈԳԵԼ” խթանիչներ, խաղողի այգիների արագ զարգացման համար, որը մեծ ներգործում ունեցավ խաղողի վազերի աճման գործում:

Գյուղ նախարարությունը օգնեց դիզ վարելանյութով և համապատասխան սերմերով: Առավել կարիգավոր 40 ընտանիքներին տրամադրվեց միանվագ օգնություն 50.0 հազար դրամ:

Կարմիր խաչ կազմակերպությունը համայնքի 86 ընտանիքներին հատկացրեց սննդի և հիգիենայի պարագաների ծանրոցներ:

Մարզպետարանը օգնեց առավել անապահով ընտանիքների երեխաներին տրամադրել ծամբարի ուղեգրեր:

Նման քայլ կատարեց “Տիրամայր Հայաստանի կուսաստան” կազմակերպությունը:

Բնական աղետներից տուժած գյուղացիներին օգնություն տրամադրող հիմնադրամից Հայկական համայնքի տարածքում կարկտահարությունից տուժած և ոչ մի օգնությունից չօգտված 150 ընտանիքների տրամադրվեց 40 հազարական դրամ օգնություն:

Համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ է իրականացվել կարկտահարությունից տուժած ընտանիքների օգնությունների բաշխումը:

Առևտրի և հասարակական սննդի, կենցաղային ծառայությունների ոլորտը վերահսկող հանձնաժողովը ժամանակին կատարում է իրեն վերապահված ստուգումները:

Համայնքում 2013 թվականի տարեսկզբում գործում էր 3 առևտրի օբյեկտ, սակայն տարեվերջում գործում էր 2 առևտրի օբյեկտ, 1 գազալցակայան և 1 ավտոլվացման կետ:

### ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրնքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման վրա:

Համայնքի բնակիչների հետ ամենօրյա աշխատանքներ է տարվում գույքահարկի և հողի հարկի հավաքագրման ուղղությամբ:

### ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական բնագավառում:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման աշխատանքներ:

Մշտապես կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ: Ամիսը մեկ անգամ կատարվում է խմելու ջրի վարակազերծման աշխատանքներ:

Շաբաթը մեկ անգամ համայնքի տարածքում կատարվում է աղբահանության աշխատանքներ: 2013 թվականի ապրիլ ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից տրվել է շինարարության թույլտվություն Հայկավան համայնքի դպրոցում վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

ՄՇԱԿՈՒԹԹԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ, ՄՊՈՐՏԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 դպրոց:

Աշակերտների թիվը 136

Ուսուցիչների թիվը 25

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում համայնքի դպրոցը:

Համայնքի ղեկավարը իր հնարավորության սահմաններում աջակցել է դպրոցի վերանորոգման աշխատանքներին

Դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ սովորում են Հանրապետության բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ուսումնական տարվա ավարտին համայնքի ղեկավարի անմիջական մասնակցությամբ դպրոցում տեղի ունեցավ միջոցառում:

Ապրիլի 24-ին Եղեռնի նահատակների հիշատակին տեղի ունեցավ միջոցառում և պսակներ դրվեցին նահատակների հուշաքարին:

Համայնքում մայիսի 9-ին մեծ շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման հաղթանակի օրը:

Համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում է գտնվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման խնդիրները, որի համար կազմակերպվում է տարբեր սպորտային միջոցառումներ:

Եղեռնի զոհերի հիշատակին կազմակերպվեց մարզային ֆուտբոլի սպարտակիադա «Արցախը և ֆուտբոլը» խորհագրով:

Արավել լավագույն 13 մարզիկներին գյուղապետարանի կողմից հատկացվել է սպորտային համազգեստներ:

2013թվականի ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն:

Գյուղապետարանի շենքում գործում է բուժ անբուլատորիա, որից օգտվում են համայնքի բնակիչները:

Համայնքում գործող «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի և համայնքի ղեկավարի աշխատանքների շնորհիվ չկան թափառող և անօթևան երեխաներ:

Համայնքում հաշվառված են 190 կենսաթոշակառուներ:

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ՝ 1 մարդ:

Նպաստառու ընտանիքներ՝ 42 ընտանիք:

- Համայնքում գարնան զորակոչը անցել է բարձր մակարդակով և չկան զորակոչից խուսափող երիտասարդներ, իսկ ծմեռային զորակոչը դեռ ընթացքի մեջ է :  
 Համայնքի տնտեսությունների թիվը 561  
 Բնակչության թիվը 1627  
 2013թվականի ընթացքում գյուղապետարանում ստացվել է տարբեր բնույթի 91 պաշտոնական գրություններ, որոնք օրինական կարգով մուտքագրվել են:  
 Գյուղապետարանի կողմից մարզպետարան և տարբեր կազմակերպություններ են ներկայացվել 122 պաշտոնական գրություններ:  
 Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ավագանին գումարել է 16 նիստ, որտեղ քննարկվել է տարբեր բնույթի հարցեր:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ


Այս ամենով հանդերձ համայնքն ունի դեռ չլուծված շատ հիմնախնդիրներ

1. Մշակույթի տան վերանորոգում:
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
3. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում:
4. Գյուղապետարանի շենքի վերանորոգում:
5. Ճանապարհների վերանորոգում:
6. Գյուղ տեխնիկայի ձեռք բերում

ԱրձաՎիրի մարզի Հայկական համայնքի 2013թվականի տարեկան  
բյուջեի եկամուտների հաշվետվություն

Եկամուտի անվանումը		Պլան	Կատարողական	Պլանի կատարման %
1	Հողի հարկ	7383,1	7294,4	98,8
2	Գույքահարկ շենք շինություններ	260,4	4,5	1,7
3	Գույքահարկ փոխադրամիջոց	2020,7	2435,8	120,5
4	Դոտացիա	11096,2	11096,2	100
5	Տուրքեր	198,0	184,0	92,9
6	Հողի վարձավճար	36,9	53,0	143,6
7	Տարեսկզբի ազատ մնացորդ	0,0	0,0	---
8	օրենքով սահ. համ, հիմնարկների մատուց. ծառ. դիմաց ստացվող այլ վճարներ	---	2540,0	---
9	Սուբվենցիաներ	614,7	614,7	
	<b>Ընդամենը</b>	<b>24150,0</b>	<b>24222,6</b>	<b>100,3</b>

Համայնքի ղեկավար՝  Ս. Գևորգյան

Առաջատար մասնագետ՝  Վ. Կարդանյան

Արմավիրի մարզի Հայկական համայնքի 2013թվականի տարեկան  
բյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն

Ծախսերի անվանումը		Պլան	Կատարողական	Պլանի կատարման %
1	Տեղական ինքնակառավարում	13994,5	13564,2	96,9
2	Մշակույթ սպորտ և կրոն	2370,0	2370,0	100
3	Սոց, արտոնություններ	800,0	800,0	100
4	Համայնքային ծառա.	913,2	630,2	69,0
5	Աղբահանում	1135,0	1135,0	100
6	Պահուստային ֆոնդ	---	---	---
7	Բնակարանային տնտեսություն	4167,3	3787,3	90,9
8	Կապիտալ նորոգումների ծախսեր	771,1	770,0	100
	Ընդամենը	24151,1	23056,7	96,1

Համայնքի ղեկավար՝  Ս. Գևորգյան

Առաջատար մասնագետ՝  Վարդանյան